ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 մարտի 2026 թվականի N 383 - Ն

ԶԲՈՍԱՎԱՐՆԵՐԻ ԵՎ ՈՒՂԵԿՑՈՐԴՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Զբոսաշրջության մասին» օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Սահմանել՝

1) զբոսավարների որակավորման պահանջները՝ համաձայն N 1 հավելվածի.

2) զբոսավարների որակավորման ընթացակարգը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) զբոսավարների վերապատրաստման ծրագիրը, կարգը, պարբերականությունը և ժամկետները՝ համաձայն N 3 հավելվածի.

4) զբոսավարների որակավորման վկայականի ժամկետը՝ համաձայն N 4 հավելվածի.

5) զբոսավարների որակավորման վկայականի ձևը՝ համաձայն N 5 հավելվածի.

6) զբոսավարների անվանաքարտի ձևը՝ համաձայն N 6 հավելվածի.

7) զբոսավարների մասնագիտացման ուղղությունները՝ համաձայն N 7 հավելվածի.

8) զբոսավարների որակավորման դադարման հիմքերը՝ համաձայն N 8 հավելվածի.

9) ուղեկցորդների որակավորման պահանջները՝ համաձայն N 9 հավելվածի.

10) ուղեկցորդների որակավորման ընթացակարգը՝ համաձայն N 10 հավելվածի.

11) ուղեկցորդների վերապատրաստման ծրագիրը, կարգը, պարբերականությունը և ժամկետները՝ համաձայն N 11 հավելվածի.

12) ուղեկցորդների որակավորման վկայականի ժամկետը՝ համաձայն N 12 հավելվածի.

13) ուղեկցորդների որակավորման վկայականի ձևը՝ համաձայն N 13 հավելվածի.

14) ուղեկցորդների անվանաքարտի ձևը՝ համաձայն N 14 հավելվածի.

15) ուղեկցորդների մասնագիտացման ուղղությունները՝ համաձայն N 15 հավելվածի.

16) ուղեկցորդների որակավորման դադարման հիմքերը՝ համաձայն N 16 հավելվածի.

17) զբոսավարի որակավորման համար դիմումի ձևը՝ համաձայն N 17 հավելվածի.

18) ուղեկցորդի որակավորման համար դիմումի ձևը՝ համաձայն N 18 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի սեպտեմբերի 1-ից:

3. Սահմանել, որ՝

1) մինչև 2028 թվականի հունվարի 1-ը «Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքով սահմանված կարգով գործունեությունը ծանուցած զբոսավարները և ուղեկցորդները կարող են մասնագիտական որակավորման և վերապատրաստման դասընթացներին մասնակցել և որակավորվել կամավորության սկզբունքով.

2) 2028 թվականի մարտի 1-ից հետո «Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքով սահմանված կարգով գործունեությունը ծանուցած զբոսավարները և ուղեկցորդները պետք է որակավորված լինեն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

30.03.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ